ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«14» 10 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000085

Ձեռնարկողը՝ ***«ԿՈՏԱՅՔԻ և ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» ՍՊԸ***
ք. Հրազդան Սահմանադրության հր. 1-ին վարչ. շ.

Գործունեությունը՝ ***Հրազդան քաղաքի տարածքում նախատեսվող Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի և Կոտայքի մարզի Ակունք և Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքների տարածքներում փոխաբեռնման կայանների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Կոտայքի և Գեղարքունիքի մարզեր

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարզյան

Առդիր եզրակացությունը՝ 9 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000085

<14> 10 2020թ.

Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի և Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ու Կոտայքի մարզի Ակունք համայնքի տարածքներում նախատեսվող փոխաբեռման կայանների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«ԿՈՏԱՅՔԻ և ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» ՍՊԸ
Նախագծող՝	«Տրանսնախագիծ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզի Հրազդան և Ակունք համայնքներ, Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք

Ներածական մաս. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 6-րդ կետի բ. ենթակետի՝ Հրազդան քաղաքի տարածքում նախատեսվող Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի կազմակերպումը դասակարգվում է որպես «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների հավաքման և Հրազդանում նոր սանիտարական աղբավայրի կառուցման և շահագործման ծրագիրը մշակված է տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Աղբահանության համակարգի ռազմավարության» պահանջների, որով նախատեսում է Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնները տեղափոխել Հրազդանի նորաստեղծ սանիտարական աղբավայր՝ օգտագործելով նաև Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ու Կոտայքի մարզի Ակունք համայնքի տարածքներում նախատեսվող փոխաբեռման կայանները: Աղբավայրի նախագծման համար Հրազդան համայնքի ղեկավարի կողմից կողմից 26.06.2019թ. տրամադրվել է թիվ 13 ճարտարապետահատակագծային առաջադրանք:

Նկարագրական մաս. ՀՀ-ում թափոնների կառավարման ներկայիս համակարգը սահմանափակվում է բնակելի տարածքներից աղբի հավաքմամբ և տեղական աղբանոցներ դրա հեռացմամբ, ինչը հանգեցրել է փողոցային աղբի տարածմանը և ապօրինի աղբահանությանը: Աղբահավակության սակագինը ցածր է, աղբահանության և

փոխադրման ընկերությունները չեն կարող բնակչությանը ապահովել աղբի հավաքման/հեռացման պատշաճ ծառայություններ: Հրազդանի աղբավայրի կառուցման նպատակը Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի համայնքների աղբահանության խնդրի կարգավորումն է:

Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկին (ՎԶԵԲ) ֆինանսավորմամբ սույն ծրագրի իրականացման համար ներդրումներն ուղղվելու են՝ Հրազդան համայնքի գոյություն ունեցող աղբանոցը սանիտարական թափոնների աղբավայրի վերափոխելուն, տրանսպորտային միջոցներ, կոնտեյներներ և թափոնների կառավարման սարքավորումներ ձեռք բերելուն և աղբավայրը շահագործող ընկերության՝ որպես առևտրային կայուն միավորի ստեղծմանը: Սանիտարական աղբավայրի համար տրամադրվող հողատարածքի մակերեսը զբաղեցնում է 24.7 հա մակերես, գտնվում է Կոտայքի մարզի Հրազդան համայնքի գոյություն ունեցող աղբանոցին կից:

Ներկայումս կոշտ թափոնները տեղակայվում են Կոտայքի և Գեղարքունիքի գործող աղբանոցներում, իսկ աղբահավաքումն իրականացվում է համայնքները սպասարկող ընկերությունների կողմից, կամ մրցույթով տրամադրվում է մասնավոր ընկերություններին: Բնակելի տարածքներում տնտեսությունները աղբը հավաքում են փոքր արկղերի մեջ, որոնք դատարկվում են աղբահանող մեքենաների կողմից: Այլ վայրերում, կոնտեյներների պակասի պատճառով, աղբը կուտակվում է փոքր աղբանոցներում և տարածվում է հողատարածքներով մեկ /որոշ աղբանոցներում աղբը հաճախ այրվում է/, ինչը առաջացնում է տեսողական տհաճություն, հոտ և բացասական ազդեցություն է թողնում հարակից տարածքների և դրանց բնակչության վրա: Գեղարքունիքի մարզում աղբը հեռացվում է հինգ հիմնական աղբանոցներ, որոնք գտնվում են բնակելի տարածքների ծայրամասերում, զբաղեցնում 41հա մակերես: Սույն ծրագրով նախատեսվում է փոքր աղբանոցների աղբը տեղափոխել Հրազդանի աղբավայր, իսկ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի բնակավայրերում /համապատասխանաբար՝ Ակունք և Մարտունի համայնքներ/ նախատեսել աղբի հավաքման և փոխադրման/փոխաբեռնման համակարգ, ներառյալ՝ վերամշակման ենթակա աղբի համար տարողություններ: Դրանք հանդիսանալու են հավաքման կետեր, որտեղ կկուտակվի աղբը՝ Հրազդանի սանիտարական աղբավայր տեղափոխելու համար: Առաջարկվող փոխաբեռնման կայանները կնվազեցնեն Հրազդանի աղբավայր աղբի տեղափոխման ծախսերը՝ փոխադրման կայան ուղարկվող ողջ աղբի համար մեծ տարողությամբ աղբատար մեքենաների օգտագործման և տրանսպորտային ծախսերի նվազեցման միջոցով:

Հրազդանի նոր աղբավայրում կտեղակայվեն Կոտայքի մարզից և Գեղարքունիքի մարզերից կենցաղային քաղաքային կոշտ թափոններ /ՔԿԹ/: Թափոնների տեսակավորման ուսումնասիրություն է կատարվել Հրազդանում «Կովի» խորհրդատու ընկերության կողմից, ինչը հանդիսանում է աշխատանքային նախագծի տեխնիկատնտեսական հիմնավորման մաս (աղբյուրը՝ նոյեմբեր 2011 Կոտայքի մարզի կոշտ թափոնների կառավարում–ՇՄՆՏ-ՇՄՍԱԳ): Առաջարկվող աշխատանքային նախագիծը չի ներառում վտանգավոր թափոնների կառավարումը, քանի որ ուսումնասիրության արդյունքում վտանգավոր թափոններ չեն հայտնաբերվել, իսկ դրանց հետ ծավալները /օրինակ՝ ներկեր, մարտկոցներ, քիմիկատներ և այլն/, ժամանակ առ ժամանակ կհավաքվեն ՔԿԹ-ի կողմից, և ժամանակավորապես կպահվեն աղբավայրում՝ մինչ մասնագիտացված մշակման/տեղակայման օբյեկտներ տեղափոխելը:

Ներկայացվող գործունեության շահառուները հանդիսանալու են Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի բնակավայրերը, սակայն գործունեության անմիջական

ազդեցությունը կրելու են Կոտայքի մարզի Հրազդան, Ակունք համայնքները և Գեղարքունիքի մարզի Մարտունի համայքը:

Հրազդանի սանիտարական աղբավայրի համար ընտրված տարածքը գտնվում է Հրազդան համայնքի վարչական տարածքում, քաղաքից 3 կմ հարավ արևելք, քաղաքում գոյություն ունեցող աղբավայրի արևելյան սահմանին, Հրազդանի ցեմենտի գործարանի կողմից գրեթե ամբողջովին շահագործված բացահանքի տարածքում՝ Երևան-Սևան ավտոմայրուղուց 300 մ հեռավորության վրա: Հրազդանի աղբավայրի համար նախատեսված տարածքի սահմաններում դիտվում են (ներքևից վերև) կավեր և պեմզային ավազաքարեր, միջին և վերին չորրորդական շրջանի անդեզիտա-բազալտային և հրաբխային խարամներ, ժամանակակից ալյուվիալ-դելյուվիալ առաջացումներ: Կավերի միջին հզորությունը կազմում է 10-12մ, որի վրա հորզոնական շերտով ընկած են պեմզային ավազաքարերը: Նշված տարածքում պաշարներն ամբողջովին մարված են և դուրս են գրվել համապատասխան հաշվեկշռից: Աղբավայրի տարածքում տեկտոնական խախտումներ, փլուզումներ, սողանքային և այլ տիպի գեոդինամիկ երևույթներ չեն հայտնաբերվել: Տեղանքի ջրաերկրաբանական պայմանները բարենպաստ են գետնաջրերը բոլոր փորվածքներում բացակայել են:

Աղբավայրի համար հայցվող տարածքը հիմնականում ներկայացված է արոտավայրով, կամ որպես լքված կավի հանքավայր: Տարածքի հողային ծածկույթը ներկայացված է մուգ դարչնագույն-շագանակագույն՝ տեղ-տեղ քարքարոտ կամ մանրախճային կազմով: Հրազդանի աղբավայրի համար նախատեսված տարածքը ընդգրկված չէ բնապահպանական տեսանկյունից խոցելի, կամ բնության հատուկ պահպանվող տարածքներում, կամ պատմամշակութային հուշարձանների սահմաններում:

Ակունք համայնքի փոխաբեռնաման կայանը գտնվում է Աբովյան քաղաքի հյուսիսային հատվածում, հիմնական մայրուղուն հարող տարածքում: Տարածքին ամենամոտ շինությունը գտնվում է մոտ 300մ հեռավորության վրա: Մուտքային ճանապարհը ամբողջությամբ ասֆալտապատված է, ապահովում է՝ տարածք մտնող աղբատար մեքենաների հեշտ մուտքը հիմնական ճանապարհից և 2 կոնտեյներով բարձված բեռնատար մեքենաների ապահով հեռացումը:

Մարտունու փոխաբեռնման կայանի տարածքը գտնվում է Մարտունի համայնքի վարչական սահմանում, Մարտունի քաղաքի հյուսիսային մասում, հիմնական մայրուղուց մոտ 600մ հեռավորություն վրա: Տարածքը հիմնականում հարթ է, տարածքին ամենամոտ շինությունը գտնվում է 220մ հեռավորության վրա: Մուտքային ճանապարհն ամբողջությամբ գրունտային է: Փոխաբեռնաման կայանը տեղադրված է ճանապարհի արևմտյան մասում և ապահովում է տարածք մտնող աղբատար մեքենաների մուտքը հիմնական ճանապարհից և 2 կոնտեյներով բարձված բեռնատար մեքենաների հեռացումը: Տարածքում նախատեսված է իրականացնել ամբողջական ասֆալտապատում, եզրաքարերի տեղադրում, տարածքի ցանկապատում՝ ապահովելով տարածքի անվտանգությունը:

Փոխաբեռման կայանքներն իրենից ներկայացնում են 2 հարթականի կառույց, որտեղ վերևի հարթությունից աղբը նետվելու է ներքևի հարթությունում տեղադրված մեծ կոնտեյների մեջ: 2 կոնտեյներ լցվելուց հետո դրանք տեղափոխող բեռնատար մեքենան իր իսկ կեռով սկզբից տեղադրելու է կոնտեյները սայլակի վրա, ապա տեղափոխում Հրազդանի աղբավայր: Երկու փոխաբեռնման կայաններում նախատեսված է բեռնատար մեքենաների ավտոկշեռք և ադմինիստրատիվ մասնաշենք, ավտակայանատեղի բեռնատար և մարդատար մեքենաների համար:

Սանիտարական աղբավայրը կհանդիսանա ութ քաղաքապետարանների համատեղ սեփականությունը, որոնք կհիմնեն Աղբավայրի կառավարման համատեղ բաժնետիրական

ընկերություն /Հրազդանի, Ծաղկաձորի, Չարենցավանի, Եղվարդի, Նոր Հաճնի, Բյուրեղավանի, Աբովյանի և Սևանի կողմից ձևավորված նոր «Կոտայքի մարզի թափոնների կառավարման» ռեգիոն/: Ընկերությունը շահագործելու է Նոր Հրազդանի աղբավայրը և նոր փոխադրման կայանները, փոխադրման կայանից դեպի նոր Հրազդանի աղբավայր աղբի փոխադրման ծառայությունները և ամբողջ Կոտայքի մարզի գյուղական բնակավայրի աղբի հավաքումը: Ընկերությունը կստանա եկամուտներ՝ աղբը աղբավայր և փոխադրման կայաններ փոխադրող աղբահանման ընկերությունների կողմից: Համայնքապետարաններին կտրամադրվեն կոնտեյներներ՝ վերամշակվող նյութերի հավաքման համար /օրինակ՝ թուղթը, ապակին և պլաստիկ իրերը և այլն/:

Հրազդանի աղբավայրի համար տրամադրված հողատարածքը հանդիսանում է «Կոտայքի և Գեղարքունիաի» ՍՊ ընկերության սեփականությունը և գտնվում է Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Երևան – Սևան մայրուղու թիվ 51 հողամասում, որի մակերեսը կազմում է 24.2784 հա: Աղբավայրն ունի 147,000 մ^2 ընդհանուր մակերեսով նախագծված ութ տեղակայման հատվածներ (խցեր)՝ 1,800,000 մ^3 աղբի ընդունման ընդհանուր ծավալով: Հիմնված աղբավայրը կունենա 11մ-ից մինչև 12մ միջին բարձրություն, բլրի թեքությունը կկազմի մինչև 37%: Աղբի խտությունը կլինի 1.0 տ/մ^3, որը հավասար է մարզային աղբավայրի 33 տարվա ընդհանուր ակնկալվող շահագործման տևողությանը: Աղբավայրը շահագործվելու է շաբաթական յոթ օր, օրը 10-12 ժամ, ապահովված է լինելու աղբատարով և դիմային բեռնիչով՝ աղբը ցրելու, խտացնելու և օրական կտրվածքով հողով ծածկելու համար:

Աղբավայրի նախագծված մեկ հատվածի առաջին խցի տարողությունը բավարար է 5-6 տարվա ընթացքում աղբի հեռացման համար: Բոլոր հատվածներն ունեն կարծր հողի ստորին շերտ, որը ծածկված կլինի բարձր խտությամբ պոլիէթիլենով՝ գրունտային ջրերի աղբյուրները և հարակից շրջակա տարածքները զտվածքների տարածման ազդեցությունից պաշտպանելու համար: Զտվածքները հավաքվելու են անջրթափանց հատակով գոլորշիացման ավազանում:

Աղբավայրում տեսակավորում չի նախատեսվում: Աղբատար մեքենաներով աղբավայր հասցվող աղբը կշռվում և գրանցվում է աղբավայրի մուտքի մոտ: Այնուհետև խտացուցիչով խտացվում է և տեղափոխվում տեղակայման համար: Այն թափոնները, որոնք չեն կարող տեղակայվել աղբավայրում /վտանգավոր աղբ/ կտեղափոխվեն աղբավայրի տեղանքում վերջինիս համար նախատեսված տարածք: Նախատեսվում է ստելաժային տարբերակով վտանգավոր թափոնների տեղադրում:

Աղբավայրի շահագործումը և բեռնումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սկզբունքներով.

- աղբավայրը բաժանված է փոքր տարածքների, որոնք հնարավորություն են տալիս տարածքում մեկ օրվա աղբի կուտակման համար,
- աղբը յուրաքանչյուր փոքր հատվածում փռվում է 0.3մ-ը չգերազանցող շերտով,
- հարթեցված աղբը կծածկվի գրունտով՝ օրական առնվազն մինչև 200 մմ խորությամբ,
- աղբավայրի ակնկալվող միջին բարձրությունը 12մ է՝ ներառյալ աղբավայրի մեկ անկյունից ակնկալվող լցնումը:

Հենց որ յուրաքանչյուր հատվածում աղբի շերտը հասնի առավելագույն թույլատրելի բարձրությանը, այն կծածկվի 0.2մ հաստությամբ ավազի/մանրախճի շերտով՝ հավաքելու համար աղբավայրի գազերը, որից հետո կծածկվի 1.0մ հաստությամբ հողով, այնուհետև խոտի և բուսականության ծածկույթով:

Նախատեսված է աղբավայրը կառուցել ըստ փուլերի: Աղբավայրի շինարարությունը կատարվելու է աղբավայրի շահագործման ամբողջ ընթացքում: Աղբավայրի առաջին փուլի շինարարական աշխատանքների հիմնական ցուցանիշները հետևյալն են.

- ակնկալվող ընդհանուր շահագործման ժամկետը կկազմի 6-6.5 տարի,
- աղբավայրի խցերի ծավալները կլինեն՝ խուց I.- 55,000 մ^3, Խուց II. - 90,000 մ^3, Խուց III. - 185,000 մ^3:

Առաջին փուլում մասամբ կկառուցապատվի նաև աղբավայրի շահագործման ներքին ճանապարհային ցանցը: Շինարարության ընթացքում աղբի համար նախատեսված տարածքը կլինի աղբավայրի տարածքից դուրս, օրինակ՝ հենց դարպասների առջև, մուտքի ճանապարհից դեպի հարավ:

Հրազդանի աղբավայրի ընդհանուր ակնկալվող շահագործման ժամկետը 23 տարի է: Ակնկալվում է, որ աղբավայրն օրական կգործի 10-12 ժամ, շաբաթը յոթ օր և համալրված է լինելու աղբավայրի խտուցիչով և ճակատային բեռնիչով՝ օրական աղբը փռելու, խտացնելու և հողով ծախկելու համար:

Հրազդանի աղբավայրի շինարարության առաջին փուլի հողային աշխատանքները ներառում են՝ վարչական մասնաշենքի, ավտոկայանատեղիի, պոմպակայանի, պահեստի, ջրամբարների և ներքին ճանապարհների կառուցման և բարեկարգման աշխատանքները և ինժեներական միացումները: Ընդամենը հողային աշխատանքների ծավալները կկազմեն՝ 175942 մ^3, այդ թվում բուսահող՝ 27280 մ^3: Բերրի հողաշերտի հզորությունը տարբեր հատվածներում տատանվում է՝ 0-ից մինչև 35 սմ: Այն մասերում, որտեղ նախկինում կատարվել են կավի արդյունահանում կամ այլ աշխատանքներ գործնականում զուրկ է բերրի հողաշերտից, իսկ մյուս հատվածներում բերրի հողաշերտի հզորությունը կազմում է 20 – 30 սմ: Բերրի հողաշերտը գործող գործող օրենսդրության պահանջներին համապատասխան կհանվի և կպահեստավորվի, հետագայում ամբողջությամբ կօգտագործվի տարածքի բարեկարգման և կանաչապատման նպատակով:

Աղբավայրի տարածքում, վարչական շենքի առջև նախատեսված է տեղակայվել անիվների լվացման սարք: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջով աղբավայրի տեղանքը լքելուց առաջ կամ հարթակային կշեռքի /եթե կշռումն անհրաժեշտ է/ օգտագործման դեպքում: Լվացման սարքից արտահոսող ջուրը կհավաքվի երկհատվածանի /երկսեկցիանի/ պարզարանում, որտեղ ջուրը զտվում է մեխանիկական մասնիկներից և յուղային մասից, այնուհետև պոմպի միջոցով վերադարձվում է լվացման սարք՝ ապահովելով լվացման շրջանառու համակարգ և բացառելով աղտոտված ջրերի արտահոսքը:

Աղբավայրի տարածքից մակերևույթային և անձրևաջրերի հեռացման և կուտակման համար նախատեսված է առանձին ավազան և դրենաժային համակարգ: Այն նախատեսված է կավային երկրաբանական շերտով և պոլիէթիլենային HDPE տիպի շերտի տեղադրումով: Ավազանը կկառուցվի ամենացածր կետում /հյուսիս-արևելյան հատվածում/ և չափսերը նախատեսված է աղբավայրի տարածքում հավաքված ջրերի ծավալով: Հաշվարկված է 12000 խոր.մ ջրավազան՝ 6000 քառ. մ տարածքում, որի միջին խորությունը կկազմի մինչև 2մ: Հաշվի առնելով որ աղբավայրի տարածքը շոգ եղանակներին անհրաժեշտ է ապահովել ջրով /որպեսզի հողի շերտում չառաջանա ճաքեր/, այդ ջրավազանը կծառայի նաև ջրման աշխատանքներն իրականացնելու համար:

Աղբատեղակայման հատվածից դուրս տեղակայվելու է զտվածքի հավաքման խուցը: Զտվածքի բոլոր հատվածներն իրականացվելու են բարձր խտության պոլիէթիլենային /ԲԽՊ/ ինքնահոս խողովակներով՝ առանց պոմպի: Հավաքվելով ավազանում զտվածքը գոլորշանում է, որից հետո հավաքվում է բաքերով համալրված բեռնատարներով և

տեղափոխվում դեպի աղբահանման հատված՝ աղբի վրա լցնելու համար: Զտվածքի լճակին հարակից տարածքում կտեղակայվի վթարային ողողման լճակը /որը կզբաղեցնի 600 մ²/: Եվ զտվածքի լճակը, և վթարային ողողման լճակը պահանջում են նստվածքների պարբերաբար մաքրում /յուրաքանչյուր 5-10 տարին մեկ/:

Աղբավայրի տարածքում վարչական շենքից առաջացած կենցաղային կեղտաջրերն ուղղվում և հավաքվում են սեպտիկ հոր, որը դատարկվելու է կանոնավոր կերպով: Կոյուղու խողովակները, որոնք պատրաստվելու են պոլիէթիլենից, տեղադրվելու են խրամուղում՝ 0.05 մ ավազի շերտի վրա և ծածկվելու են 0.30մ ավազով:

Խմելու ջուրն ապահովվելու է տեղական համայնքային ջրացանցից: Տեղանքում 10 մ³ տարողությամբ ջրային բաքը կնախատեսվի որպես այլընտրանքային տարբերակ:

Էլեկտրամատակարարումը դեպի տեղանք նախատեսվում է անցկացնել տեղային էլեկտրական ցանցից: Աղբավայրի գլխավոր բաշխիչ վահանակը միացված է լինելու մոտակա տրանսֆորմատորային ենթակայանի բաշխիչ վահանակին:

Աղբավայրը սպասարկող շինություններում գազամատակարարում չի նախատեսվում: Շինությունների ջեռուցումը իրականացվելու է յուղային տաքացուցիչների և օդորակիչների միջոցով:

Աղբավայրի գազերի այրման/օգտահանման համակարգը ստեղծվելու է աղբավայրում վերջնական ծածկի տեղակայումից հետո: Հաշվի առնելով Կովիի կողմից թափոնների ծավալի գնահատման վերաբերյալ ուսումնասիրությունները, գազերի հավաքումը մարզային աղբավայրում արդյունավետ չի լինի աղբավայրի առնվազն 3 տարի շահագործման ընթացքում, այդ իսկ պատճառով հավաքման և այրման սարքավորումները չեն տեղադրվելու, որպեսզի չպահանջվի թարմացնել դրանք մինչ օգտագործումը, քանի որ չօգտագործվելու արդյունքում կարող է շարքից դուրս գալ և քայքայվել: Առաջնային գազերի հավաքման հորերը և համապատասխան խողովակաշարի տեղակայումը կընդգրկվեն նոր աղբավայրի նախագծում:

Բոլոր թվակված աշխատանքները՝ ներառյալ առաջին երեք բջիջները, նախատեսված է իրականացնել երեք տարվա ընթացքում: Հետագայում շարունակաբար կիրականացվեն բջիջների փակման, ծածկման, ռեկուլտիվացման և նոր բջիջների պատրաստման աշխատանքները:

Քանի որ Մարտունի և Ակունք համայքների փողաբեռնման կայանների տարածքներում զգալի շինարարական աշխատանքներ չեն իրականացվելու, ուստի ՇՄԱԳ-ում դիտարկվել է միայն Հրազդանի աղբավայրի կազմակերպման արդյունքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունները: Շինարարության փուլում հնարավոր ազդեցությունները պայմանավորված կլինեն շինությունների կառուցման հողային աշխատանքներով, բուսահողի հանմամբ, անօրգանական փոշու և ծխագազերի արտանետումներով, աղմուկի մակարդակի ավելացմամբ, շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործմամբ: Հողային աշխատանքներն իրականացվելու են շինությունների, ենթակառույցների և ճանապարհների շինարարության, ինչպես նաև աղբի կուտակման բջիջների նախապատրաստման ընթացքում: Գումարային փոշու արտանետումները հողային աշխատանքների ժամանակ հաշվարկվել են 40.6 տ/շին. ժամանակահատված: Շինարարության ընթացքում առաջացող արտանետումները կլինեն տեղայնացված և ենթակա արագ ցրման՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն ՇՄԱԳ-ի բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացմամբ, մասնավորապես՝ փոշու արտանետումների նվազեցնելու համար կիրականցվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, գրունտի խոնավացում,

տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում և այլն: Շինարարական աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ ջուրն օգտագործվելու է աշխատանքային հրապարակների ջրցանի, հանվող հողի/գրունտի խոնավացման, ինչպես նաև աշխատողների կենցաղային նպատակների համար: Ընդհանուր շինարարական աշխատանքների ջրապահանջը հաշվարկվել է 2272.0 մ^3:

Աղմուկի ազդեցությունը շինարարության ընթացքում պայմանավորված կլինի շինտեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործմամբ, սակայն հաշվի առնելով տարածքի հեռավորությունը Հրազդան քաղաքի բնակելի թաղամասերից /մոտ 2.5 կմ/ աղմուկի ազդեցությունը էական չի լինի և բնակավայրերում գործնականում չի զգացվի: Աշխատանքային տեղամասերում սանիտարական նորմերն ապահովելու համար հաշվի կառնվի շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցների աղմուկի մակարդակի տեխնիկական ցուցանիշը:

Շահագործման փուլի ազդեցությունը պայմանավորնած կլինի աղբի տեղափոխման, կուտակման, զտման և տեղակայման աշխատանքներով: Աղբավայրի շահագործման ընթացքում օդային ավազանի վրա ազդեցությունը պայմանավորված կլինի աղբի քայքայման /անաէրոբ խմորում/ ընթացքում առաջացող աղբավայրային գազի /կենսագազ/ առաջացմամբ: Խմորումը կլինի անաէրոբ, քանի որ աղբը տեսակավորումից հետո կծածկվի հողային շերտով և հետագա գործընթացները տեղի կունենան առանց թթվածնի առկայության: Համաձայն նախագծի կենսագազի հիմնական քանակները կսկսեն առաջանալ աղբավայրի շահագործումից մոտ 3 տարի հետո: Կենսագազի որսման համար կփորվի հորատանցքերի ցանց, որոնք կմիացվեն խողովակներով և կենսագազը կուղղվի գեներատոր՝ էլեկտական էներգիա ստանալու համար: Դրա նախագծումը կիրականացվի աղբավայրի շահագործման որոշակի փուլում, երբ պարզ կդառնա աղբի իրական կազմը /մորֆոլոգիա/ և քանակները:

Աղբավայրի շահագործման ընթացքում հնարավոր բացասական ազդեցությունը պայմանավորված կլինի նաև աղբի քայքայման արդյունքում առաջացող արտահոսքերով /զտվածք/: Արտահոսքը առաջանում է աղբում պարունակվող օրգանական միացությունների քիմիական վերափոխման արդյունքում: Զտվածքի կազմը ժամանակի ընթացքում փոխվում է, շատ աղտոտված է լինում հիմնականում առաջին փուլում: Այս կազմով զտվածքի վնասազերծման ամենաօպտիմալ լուծումը՝ նախագծով նախատեսված աղբի խոնավացումն է, որի նպատակն է կանխել աղբի չորացումը և ինքնաբռնկումը:

Աղբավայրի շահագործման ժամանակ աղբատար մեքենաների երթևեկությունը կստեղծի որոշակի ծանրաբեռնվածություն՝ ինչպես Սևան-Երևան մայրուղու, այնպես էլ ներհամայնքային ճանապարհների վրա: Աղբավայրի պլանային հզորությամբ աշխատելու պայմաններում օրական երթերի թիվը սպասվում է 35-ից 40-ի սահմաններում, միջին ժամային թիվը կլինի՝ 3 – 4 երթ, ինչը չի կարող էապես ազդել ճանապարհների երթևեկության վրա:

Աղբավայրերում ջերմոցային գազերի արտանետումները ներառում են մեթանի, ածխաթթու գազի և ազոտի ենթօքսիդի արտանետումները, որոնք առաջանում են կոշտ թափոնների քայքայման ընթացքում: Այս միացություններից հիմնականը, հաշվի առնելով նաև վտանգավորության գործոնը, հանդիսանում է մեթան գազը, որի համար ՇՄԱԳ-ում իրականացվել է արտանետումների ցրման և գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ՝ «Էռա» համակարգչային ծրագրով: Համաձայն հաշվարկի արդյունքների՝ գետնամերձ կոնցենտրացիաների արժեքները ստացվել են շատ ցածր՝ 0.00015 ՍԹԿ: Որպես արտանետման աղբյուր ընդունվել է աղբավայրի մի բջիջի նվազագույն մակերեսը

/հարթակային աղբյուր/, քանի որ ամբողջ աղբավայրի տարածքը շատ մեծ է և այդ դեպքում գետնամերձ կոնցենտրացիաները կլինենին անհամեմատ ավելի փոքր:

Աղբավայրի փակման բնապահպանական ռիսկերը պայմանավորված են այն հանգամանքով, որ կպահանջվի 30 տարվա վերականգնողական շրջան: Բացի այդ, գտվածքների և կենսագազի առաջացումը կարող է շարունակվել ևս 50 տարի կամ ավելի: Աղբավայրի բջիջները լցվելուց գետո ենթարկվում են ռեկուլտիվացման: Այդ նպատակի համար, շինարարական աշխատանքների ժամանակ կուտակված բերրի հողը կտեղափոխվի փակվող բջիջի տարածք և կհարթեցվի բուլդոզերի օգնությամբ: Տեխնիկական ռեկուլտիվացումից հետո, կիրականացվի կենսաբանական ռեկուլտիվացում, որի ընթացքում կստեղծվի բուսածածկ: Մեկ բջիջի տեխնիկական ռեկուլտիվացման ծախսերի հաշվարկը, կկազմի 2570.0հազ. ՀՀ դրամ: Ներկայացված հաշվարկը նախնական է, ուստի յուրաքանչյուր բջիջի ռեկուլտիվացումից առաջ կկատարվի ստույգ հաշվարկ:

Հրազդանի աղբավայրի համար առաջրկվող մոնիթորինգի միջոցառումները ներառում են՝ ստորգետյա և մակերևութային ջրերի, գտվածքի, կենսագազի, մոնիթորինգը՝ յուրաքանչյուր 6 ամիսը մեկ ժամանակացույցով: Նախատեսված է նաև Հրազդան քաղաքի օդային ավազանում մեթանի պարունակության չափում:

Եզրափակիչ մաս Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Հրազդան քաղաքում անցկացված հանրային քննարկումների ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Փորձաքննական գործընթացում նախագծային փաստաթղթերի վերաբերյալ շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ից, առողջապահության, արտակարգ իրավիճակների և պաշտպանության նախարարություններից և Երևանի քաղաքապետարանի կողմից ստացված կարծիքները ևս հաշվի են առնվել: Նախագծով նախատեսված սանիտարական աղբավայրի կազմակերպումը կունենա դրական նշանակություն՝ ինչպես բնապահպանական, այնպես էլ սանիտարական տեսանկյունից: Աղբավայրի շահագործմանն առնչվող բնապահպանական խնդիրները հիմնականում վերաբերում են գտվածքների առաջացմանը և աղբավայրում գազերի արտազատմանը, որի համար նախագծում առաջարկվել են արդյունավետ և արդիական լուծումներ:

Փորձաքննական պահանջներ

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով առաջին երեք բջիջների փակումից հետո, մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացնել աղբավայրի հին բջիջների փակման/ռեկուլտիվացիայի, աղբավայրի նոր բջիջների պատրաստման, Հրազդանի աղբավայրից կենսագազի ստացման նախատեսվող գործունեությունների նախագծային փաստաթղթերը և ՇՄԱԳ հաշվետվությունը:
2. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է՝ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում փոխաբեռնման կայանքի տեղադրման աշխատանքները համաձայնեցնել «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և Մարտունու համայնքապետարանի հետ:
3. Աղբավայրում նախատեսել աղբի տեսակավորման միջոցառումներ՝ վերամշակման ենթակա նյութերը /թուղթը, ապակին, պլաստիկ իրերը և այլն/ և վտանգավոր թափոնները տարանջատելու համար:

4. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության հետ համաձայնեցնել՝ նախագծված աղբավայրի տարածքում առկա գազատարի համար քաղաքաշինական նորմերով պահանջվող հեռավորությունները և անվտանգության գոտիները:
5. Շահագործվող աղբավայրի տարածքում աշխատողների անվտանգության և առողջության ապահովման համար անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 23-րդ գլխի պահանջներով:
6. Անհրաժեշտ է աղբավայրից արտանետվող գազերի, զտվածքների, ինչպես նաև աղբի խտացման հետևանքով առաջացող կեղտաջրերի համար մշակել վերահսկման մեխանիզմներ՝ կարևորելով կեղտաջրերի հեռացման լուծումները և կանոնավոր մշտադիտարկումների իրականացումը և ըստ անհրաժեշտության նախատեսել լրացուցիչ միջոցառումներ:
7. Անհրաժեշտ է աղբավայրի շահագործման փուլում ըստ ժամանակացույցի ապահովել՝ զտվածքի, կենսագազի, խտացման հետևանքով առաջացող կեղտաջրերի, բնակավայրի տարածքի, ինչպես նաև ստորգետնյա և մակերևութային ջրերի մշտադիտարկումների իրականացումը՝ բացառելու նպատակով շրջակա տարածքների, ջրային, հողային ռեսուրսների և օդային ավազանի հնարավոր աղտոտումը:
8. Աղբավայրի փակման պաշտպանիչ համակարգում հողաշերտի վնասը կանխելու նպատակով նախատեսել պարբերաբար զննումներ և ըստ անհրաժեշտության նախատեսել հակաէրոզիոն միջոցառումներ:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԿՈՏԱՅՔԻ և ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» ՍՊԸ կողմից նախատեսվող Հրազդան քաղաքի տարածքում նախատեսվող Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի և Կոտայքի մարզի Ակունք ու Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքների տարածքներում փոխաբեռնման կայանների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Գլխ. մասնագետ՝ Հ. Մկրտչյան